Դպրոցի մթնոլորտ
Իրավունքների օրինագիծ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (LAUSD) պարտավորվում է ստեղծել անվտանգ, առողջ, հյուրընկալ և դրական դպրոցական միջավայր:

Աջակցման բազմաստիճան համակարգերի (MTSS) շրջանակը, Դրական վարքագծի միջամտություն և աջակցություն/վերականգնողական պրակտիկան (PBIS/RP) աջակցում են բոլոր շահագրգիռ կողմերին՝ իրականացնելով գիտականորեն հիմնավորված միջամտություններ: PBIS/RP-ն ապահովում է կառուցվածքներ և պրակտիկաներ, որոնք ստեղծում են սովորելու և դրական վարքագծի մշակույթ, հարաբերությունների կառուցում, ինչպես նաև համակարգեր ու կառուցվածքներ, որոնք լուծում են երեխայի, ամբողջ դասարանի, ամբողջ դպրոցի և ամբողջ համայնքի առողջական ու սոցիալ-էմոցիոնալ կարիքները:

2013 թվականի մայիսին ընդունվել է Դպրոցի մթնոլորտի վերաբերյալ իրավունքների օրինագիծը, որը ներառում է.

Դրական վարքագծի միջամտություն և աջակցություն/վերականգնողական պրակտիկան (PBIS/RP)՝

PBIS/RP-ն աջակցության բազմաշերտ համակարգերի վրա կառուցված շրջանակ է, որը նպաստում է կանխարգելմանը և միջամտությանը՝ ստեղծելով համայնք, կառուցելով առողջ հարաբերություններ և ստեղծելով կառույցներ և համակարգեր: Վարքագծային ակնկալիքները հստակորեն սահմանվում են, դրականորեն արտահայտվում, տեղադրվում, ուսուցանվում, մոդելավորվում, ամրապնդվում և ուղղվում են տարիքին համապատասխան համակարգված ձևով՝ շեշտը դնելով սովորելու վրա: Սա նպաստում է դրական դպրոցական մթնոլորտին, աճում է ակադեմիական ներգրավվածությունը և հաճախելիությունը, ինչպես նաև նվազեցնում է կասեցումները:

Կասեցման այլընտրանքներ՝

Կասեցման լավագույն այլընտրանքը կանխարգելումն է: Կասեցման այլընտրանքներն օգտագործվում են բոլոր աշակերտների հետ հետևողականորեն և տարիքին համապատասխան՝ շեշտը դնելով անհրաժեշտ հմտությունների ուսուցման և սովորելու վրա դպրոցական դրական մթնոլորտը բարելավելու համար: Ոչ մի աշակերտի հաճախումը չի կարող կասեցվի կամ աշակերտը չի կարող հեռացվել դիտավորյալ անհնազանդության համար:

Տվյալներ՝

Տվյալները հրապարակվում են ամեն ամիս՝ ներառյալ դպրոցի և դպրոցից դուրս կասեցումը, բառելավման փոխադրումը, հեռացումը, քրեական հետապնդումը և դպրոցական կալանքը: Նման տվյալները, երբ կիրառելի են և մատչելի, կբաժանվեն ըստ ենթախմբերի, ներառյալ ռասան, էթնիկ պատկանելությունը, անգլերեն սովորողի կարգավիճակը, հաշմանդամությունը, սեռը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և հանցանքը: Տվյալները կտրամադրվեն այնպես, որ պահպանվի առանձին աշակերտների գաղտնիությունը: Տվյալները հասանելի են դիտման համար: (https://my.lausd.net/opendata/landing_page)

Աշխատանքային խումբ՝

Շրջանի աշխատանքային խումբը պետք է ներառի ուսուցիչ, աշակերտ, ադմինիստրատոր, ծնողների ներկայացուցիչ և համայնքի գործընկերներ՝ վերանայելու համակարգերը և գործիքները՝ կապված PBIS/RP-ի իրականացումն ապահովելու համար: Այս աշխատանքային խումբը տրամադրում է ուղեցույց, վերահսկում և առաջարկություններ PBIS/RP-ի համակարգված և համակարգային իրականացման և մոնիտորինգի վերաբերյալ:

Դպրոցի ոստիկանության աշխատակիցներ՝

Աշակերտներն իրավունք ունեն ապահով, հյուրընկալ և աջակցող դպրոցական միջավայրի, որտեղ իրավապահների, պրոբացիոն, անչափահասների արդարադատության և քրեական արդարադատության ներգրավվածությունը հնարավորինս նվազագույնի կհասցվի: Շրջանը պահպանում է ոչ քրեական կիրառման մոդել, որն աջակցում է ռազմավարական խնդիրների լուծմանը, այլ ոչ թե քրեական հետապնդման և կալանավորման վրա հիմված կիրարկմանը:

Պաշտոնական բողոք՝

Աշակերտները և ծնողները/խնամակալները/խնամատարները իրավունք ունեն պաշտոնական բողոք ներկայացնել, եթե PBIS/RP-ն չիրականացվի դիմելուց հետո 60 օրվա ընթացքում: (https://dfpcomplaint.lausd.net/ComplaintForm.aspx)

Խորհրդի 2013 թվականի Դպրոցական կարգապահության քաղաքականություն և Դպրոցի մթնոլորտի վերաբերյալ իրավունքների օրինագիծ, ընդունված Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի կրթական խորհրդի կողմից 2013 թվականի մայիսի 14-ին: